

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՐՑԵՐ



ԼԵՋՎԻ ԳՈՅԱԶԵՎԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հարցի լուսաբանման տեսակետից էական նշանակություն ունի լեզվական նորմայի ըմբռնումը: Լեզվական նորմայի դադարի փարը ուսումնասիրության առարկա դարձավ գրական լեզվի և լեզվական մյուս գոյաձևերի կամ տարատեսակների փոխհարաբերությունների քննության ժամանակ¹:

Լեզվական նորմայի ըմբռնումը տերտորեն կապված է, մի կողմից՝ լեզվի համակարգի, մյուս կողմից՝ լեզվական համակարգի իրացման՝ խոսքի հետ: Նորման միջին տեղ է գրավում լեզվի համակարգի և խոսքի կիրարկության (տեղում) միջև:

Համակարգը լեզվական վերացարկման վերին աստիճանն է: Այս մակարդակում լեզուն գոյություն ունի լեզվական հիմնական տարրերի ձևով, որպես հնչյւթների, ձևւթների, կառուցվածքների, հարաբերությունների մի ամբողջական համակարգ, որին հսկազրկում է նորման: Նորման տվյալ լեզվական կառուցվածքի իրացումների ամբողջությունն է: Նա լոնդոնում է աջն, ինչ վրա համակարգում և հենվում է որոշակի կանոնների վրա: Մյուս կողմից, նորմայի մակարդակին հակադրվում է անհատական խոսքը, որը ամենալայն հասկացությունն է, քանի որ խոսքը սրտունակում է

¹ Կան լեզվական նորմայի տարրեր ըմբռնումներ, տարրեր մոտեցումներ և մեկնարանություններ: Այս հարցին ժամանակակից լեզվաբանության մեջ զգալի տեղ է հատկացվում, ընդ որում նկատելի է նաև տերմինաբանության բազմազանություն և անմիջորինակություն: Ներկայումս զնահատվում է հատկապես Պրագայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչների մատուցած ծառայությունը այս բնագավառում (տե՛ս А. Едличка, О пражской теории литературного языка, Пражский лингвистический кружок, сб., М., 1967: Л. Н. Скорцов, Норма. Литературный язык. Культура речи. Актуальные проблемы культуры речи, сб., М., 1970):

նաև պատահական, ժամանակավոր, ոչ ավանդական և երբեմն ոչ ճիշտ երևույթներ, որոնք կարող են լինել բավականաչափ տարածված, ինչպես, օրինակ, ամբողջ, տրամվայ, ամբիոն և այս կարգի այլ բառերի ն-ով արտասանությունը՝ ա[ն]բողջ, տրա[ն]վայ, ա[ն]րիոն. ընկեր, ուտեղ, գործ, ճանն բառերի ըն[դ]եր, որ[դ]եղ, գոր[ծ], ճան[ը] արտասանությունը և այլն: Այս կարգի երևույթների շարքը կարելի է դասել նաև ն, ի ձայնավորներից առաջ դ, ա-ի փոփոխված արտասանությունը՝ [դ']իրեկտոր, [դ']իպլոմ, [տ']եխնիկա, [Տ']իգրան, Ավե[տ']իսյան և այլն. ճիսուն, կըտ-րին, ութսուն բառերի հի[ց]ուն, կարի[չ], ութ[անա]սուն արտասանությունը և այլն:

Խոսքային մակարդակում է, որ առաջանում են հնչյունական զանազան սղոմներ և անկումներ: Օրինակ՝ ինքնըստինքյան—[ինքըստինքյան], գործունեություն—[գործնէյություն], կանոնավոր—[կաննավոր], մորիլիզացնել—[մօրլիզացնէլ], խորհրդակցական—[խօրթակցական]. որովհետև-ը կարող է արտասանվել [վօրտէվ], պատճառ-ը՝ [պատճառ] և այլն: Հնչյունների առնմանության (ինչպես նաև անկման) հետևանքով որոշ բառեր կարող են սխալ արտասանվել: Համեմատիր՝ ուսուցչական—[ուշչական], ընդունել, ընդունակ—[ոնթոնէլ], [ոնթոնակ] և այլն: Ձայնավորական որոշ զուգորդումներ ձայնակապակց արտասանվելու փոխարեն կարող են վերածվել երկհնչյունի: Օրինակ՝ միասին—[մյասին], տիեզերք—[տյէզէրք], միանալ—[մյանալ] և այլն. բառավերջի վ-ն կարող է արտասանվել ֆ, ինչպես՝ և—[լէֆ], ով—[օֆ], տեսավ—[տէսաֆ], այնուամենայնիվ—[այնուամէնայնիֆ], նաև—[նալէֆ] և այլն: Բերված օրինակների վրա կարելի է ավելացնել ուրիշները, բայց այդ բոլորը, ինչպես նշեցինք, չեն կրում վանդակա՛րնություն, այլ առաջանում են խոսքում զանազան պատճառներով:

Լեզվի այս մակարդակում վարող անբուլթ, շղթա, ճեղք, մեղք, ճաղթել, գաղթել, աչքեր, խվիչեղեն, լվացատուն, դեպֆուս, մտփս բառերն ու բառաձևերն արտասանվել [թուխտ], [շըխտա], [ճէխկ], [մէխկ], [հախտէլ], [գախտէլ], [աչկէր], [խըմիչկէղէն], [լըվացկատուն], [դէպկում], [մըտկիս] և այլն: Սակայն այսպիսի հնչումը, ինչպես ասացինք, վերաբերում է ձիարարկությանը և առաջանում է հնչյունների մեկը մյուսին հարմարակիցելու հետևանքով: Տվյալ երևույթը չի կրում հասարակա՛յնորեն սրատարրի բնույթ և դանդաղ ու խնամքով արտասանված խոսքում կարող է չդրսևորվել:

Այս մակարդակում հանդիպում են նաև շեղումներ, որոնք թեև պայմանավորված են լեզվի ձևաբանական կառուցվածքով, սակայն չեն համապատասխանում նորմային: Այսպես, օրինակ, եթե մեկը տալիս, կերտ ասելու փոխարեն ասում է ՊԱՐԵՑԻ, ՊԱՐԵՑԻ (այսպես է պատահում ավելի շատ երեխաների մոտ), ապա խախտում է հիշյալ բայերի անցյալի կազմության կանոնը: Բայց այդ սխալ ձևերը կառուցվածքից դուրս չեն, այլ բխում են հենց հայերենի անցյալ ժամանակի կազմության ձևերից (հմմտ. խմբից, խոսքից, կապիցի և այլն): Նույն ձևով, եթե մեկը, օրինակ, այգուց, գինուց ասելու փոխարեն ասում է այգիից, գինիից, ապա ախտահարում է սովորաբար բացառականի կազմության կանոնը: Այս ձևերը ևս, չհամապատասխանելով ընդունված նորմային, պայմանավորված են հոլովական համակարգի կառուցվածքով²: Մի շարք դեպքերում ստացվում է այնպես, որ սխալը օրինաչափական է, որովհետև թելադրվում է լեզվի կառուցվածքով:

Խոսքի մակարդակում, հիմնվելով համաբանության վրա, աղա-տորեն օգտվում են լեզվի բառակազմական կաղապարներից:


Երբեմն քննվող հարցերի ընդգրկում, նյութի թերադրանքով, այս կամ այն կոնկրետ հանգամանքներով պայմանավորված՝ հենց ստեղծում կարող են կազմվել այնպիսի բառեր, որոնք մնայուն չեն և չեն զետեղվում բառարաններում: Բերենք ևրկու այդպիսի օրինակ. Գ. Խ. Սարգսյանի «Հիմնագուրկ տեսություններ Ուրարտուի մասին» հոդվածում (ՊԲՀ, 1970 № 3) հեղինակի կողմից կազմվել են շատ դիպուկ «ուրարտաժխտական», «ուրարտաժխտողներ» բառերը, որոնք պայմանավորված են տվյալ հոդվածի բովանդակությամբ՝ բնութագրելով ուրարտագիտության ժխտումը և ուրարտագիտությունը ժխտող անձանց: Այնուհետև, «Թե ինչ արժե ջջանը» երգիծական պատմվածքում (ԵՅ, 17/1—1972) կազմված է «ջանավաճառ» բառը, որը վերաբերում է այն վաճառողներին, որոնք շահադիտական նպատակներով շուայլում են ջջանը: (Այս տիպի բառերի ստեղծումը, հատկապես երգիծական պատմվածքներում և ֆելիետոններում, շատ սովորական է): Երկու դեպքում էլ բառերը կազմված են հայերենի բառակազմական կաղապարներին համապատասխան, բայց սրանք, ինչպես կարելի է տեսնել տվյալ բառերի բընույթից, մնայուն չեն, իրադրական են և բխում են խոսքի բովանդակությունից: Հայերենի լեզվական կաղապարների հիման վրա

² Լեզվի կառուցվածքից բխող, բայց նորմային չհամապատասխանող ձևերի բնույթը կարող է տարբեր լինել, ինչպես՝ ՊԱՐԵՑԻ և գինիից:

կազմված այդ կարգի քառերը նույնպես չունեն նորմատիվ քնույթ, և վերաբերում են կիրարկությանը: Իհարկե, չի բացառվում, որ այս ձևով ստեղծված շատ բառեր այնուհետև տարածում ստանան և ընդհանրանան, մտնելով բառարանների մեջ:

Խոսքի մակարդակում երևան եկող շեղումները միշտ չէ, որ պայմանավորված են լեզվի համակարգով: Երբեմն այս մակարդակում հանդիպում են անարհեստի երևույթներ, որոնք արդյունք են արտաքին ազդեցությունների, բարբառների, երկլեզվության և այլն: Լեզվի նորման միջին տեղ է գրավում երկու եզրերի՝ համակարգի և համակարգի իրացման՝ խոսքի միջև:

Այս երեք ըմբռնումների փոխհարաբերությունը ներկայացվում է հետևյալ սխեմայով³:



Բնականորեն նորման ավելի լայն է, քան համակարգը, բայց ավելի նեղ, քան խոսքը՝ կիրարկությունը: Խոսքում դրսևորվող շատ փոփոխություններ նորմայում զնադաստվում են որպես սխալներ կամ անցողիկ երևույթներ:

Խոսքի ավելի հանգամանակից նորմայի և մասնավորապես գրական նորմայի մասին:

Նորման (կանոնադրյալ մակարդակը) ընդգրկում է առավել կայուն և ավանդական լեզվական իրացումները, որոնք ընդունվում են հասարակության կողմից և գիտակցվում են որպես ճիշտ ու պարտադիր⁴:

Նորմայի ամենաբացահայտ և ընդհանուր հատկանիշներն են լեզվական իրացումների հարաբերական կայունությունը, ընտրողականությունը, պարտադիրությունը և ճշտությունը:

Նորման հսկում և կասեցնում է լեզվում մշտապես տեղի ունեցող փոփոխությունները, ապահովելով կապը սերունդների միջև: Բայց միաժամանակ լեզվի նորման շարժուն է և փոփոխվող: Նա պատմական կատեգորիա է, անընդհատ նորոգվում և մշակվում է:

³ Տե՛ս P. A. Будагов, Литературные языки и языковые стили, М., 1967, էջ 28: Սխեման առաջարկված է Կոսերիուի կողմից:

⁴ Общее языкознание, М., 1970, стр. 558.

Դա է սլատճառը, որ նորման կայուն է հարաբերականորեն, իսկ կայունությունը պայմանավորված է նրա օբյեկտիվությամբ և հասարակական գնահատման բնույթով:

Նորմայում ընտրվում է այն, ինչ կա լեզվական համակարգում և գնահատվում է ճիշտ ու պարտադիր տվյալ լեզվական հանրության համար, Եթե ուտեցի կամ տաբեցի ձեռքը ճիշտ լինելով լեզվի կառուցվածքի տեսակետից, սխալ են գնահատվում նորմայում, ապա այդ գնահատումը տրվում է հասարակախորհուն և հիմնվում է նախ և առաջ լեզվական ավանդության վրա:

Ինչպես նշվեց, լեզվական նորման պատմական հատկացություն է, քանի որ այն, ինչ ճիշտ է լեզվի զարգացման տվյալ ժամանակաշրջանի համար, կարող է նորմայի տեսանկյունից սխալ գնահատվել մեկ այլ փուլում: Վերջնենք թեկուզ հետևյալ փաստը: Յանրկենշյունի կրած փոփոխությունն փնտրելով Մ. Աբեղյանը գրում էր հետևյալը. «Այս ձևափոխությունը նոր լեզվի մեջ փենդանի չէ, ուստի դարձյալ հայերեն չափարտած մարդիկ սխալ կազմություններ են անում, ինչպես են՝ «գրասենյակային», «հոթելյանական», փոխանակ «գրասենյակային», «հոթելյանական» ձևերի» (Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 199—200): Այստեղ նշված գրասենյակային և հոթելյանական ձևերը գործածությունից դուրս եկան, և այն, ինչ սխալ էր համարվում 20-րդ դարի սկզբներին, դառնում է կանոնադրական դարձյալ կետերին:

Գրական լեզվի նորման համարվում է լեզվական նորմայի իրացումների և գործառնությունների մի մասնավոր գոյաձևը: Այստեղ լեզվական իրացումների ճշտության հետ միասին առաջին պլանի վրա է մղվում նաև նրանց օրինակելի և գերադասելի լինելու հատկանիշը: Գրական նորմայի համար կարևոր է լեզվական իրացումների գիտակցված ընտրությունը և մշակվածությունը, ինչպես և դրանց ամրացումը լեզվի նկարագրությանը նվիրված դասագրքերում⁵:

Այն, ինչ ճիշտ է լեզվական նորմայի տեսանկյունից, կարող է ընդունելի չհամարվել գրական նորմայում:

Այս հարցում կարևոր է լեզվի գործառական տարատեսակների և ոճերի հաշվառումը:

Այսպես: Գրական հայերենի մի՛ կարգաք, մի՛ բարկանաք, մի՛ անհանգստանաք ժխտական հրամայականի ձևերին զուգահեռ ներկայումս խոսակցական լեզվում տարածված են ստացել մի՛ք

⁵ Նույն տեղում, էջ 565:

կարգա, մի՛ք բարկանա, մի՛ք անճանգստանա տարբերակները: Ներկա փուլում այս ձևերը թեև իրողութիւն են խոսակցականում, սակայն մերժելի են գրական նորմայի տեսանկյունից: Ուրեմն՝ գրական նորմայում ընտրվում է լեզվում գոյակցող տարբերակներից այն, որը գերադասելի է: Գրական նորմայի սահմաններում չի թաքտվում նաև համազոր տարբերակների գոյութիւնը:

Նորմայի հարցը կարևորութիւն է ստանում լեզվում առաջացած այն փոփոխութիւնների տեսանկյունից, որոնք տեղի են ունենում համեմատաբար փոքր ժամանակաշրջանում: Այդպիսի փոփոխութիւնները, շոշափելով լեզվի կառուցվածքը, վերաբերում են նրանց իրացումներին և գործառութիւններին: Այսպես, օրինակ, մի քանի տասնամյակ առաջ գրականութեան մեջ կանոնական էին մեհի, բրբի, կարնի, ոսի, ակմբի և թեքման ժամանակ հնչյունափոխվող այլ ձևեր, որոնց փոխարեն գործածութեան մեջ մտան և կանոնական դարձան այս բառերի անհնչյունափոխ ձևերը, ինչպես՝ մուհի, բուրի, կարնի, ուսի, ակմբի և այլն: Փոխվեց մի խումբ բառերի թեքական ձևերի կազմութեան կանոնը՝ նորման, որը որևէ չափով չաղդեց կառուցվածքի վրա, մասնավորապէս որ հնչյունափոխութեանը առջ կարգի բառերում հանդես էր գալիս որպէս ընդհանրական հնչյունափոխութիւն, այսինքն՝ չէր տարածվում բոլոր նման բառերի վրա:

Մի այլ օրինակ: Մի քանի տասնամյակի ընթացքում փոխվեց նաև մի խումբ բառերի աղափոխութեան նորման: Օրինակ՝ ճաշող, օգնառու, մակարդակ, աղի, մաղձ, ըզձական, մեծավոր, գուգանեռ, ողբերգական, հրդեհ, նվագախումբ բառերը, որոնք ունեին շնչել խուլ արտասանութիւն, ինչպես՝ հա[չ]ող, օ[ք]ոստոս, մա-կար[թ]ակ, ար[թ]ի, մա[խց], ը[խց]ական, մեք[ց]ավոր, զու[ք]ահեռ, հր[թ]եհ, նվա[ք]ախումբ և այլն, ներկայումս հընչվում են ըստ գրութեան:

Այսպիսով, գրական նորմայի կայունութիւնը հարաբերական է և չի կարող խոչընդոտ ծառայել լեզվական փոփոխութիւնների համար:

Գրական նորմայի ըմբռնման հետ սերտորեն առնչվում է լեզվական տարբերակների հարցը: Գրական նորմայի կայունութիւնը չի բացառում նաև լեզվում օգտագործվող միջոցների տարբերակայնութիւնը: Նորմայի մակարդակում հայերենում (ինչպես և այլ

6 Տարբերակայնութիւնը բնորոշ է ժամանակակից զարգացած գրական լեզուների մեծ մասին (տե՛ս Общее языкознание, էջ 568), Փ. Մ. Филин, О структуре современного русского литературного языка, ВЯ, 1973, № 2, էջ 11:

չեզոքներում) գոյութիւն ունեն տարբերակներ կամ լայն իմաստով՝ համանիշներու հոսքը, անշուշտ, ալեպիտի տարբերակների մատին է, որոնք գոյակցում են գրաւոր և ուրախ շրջանակներում:

Ամենից ավելի տարբերակայնութիւնը (համանիշութիւնը) ցայտուն է շարահիշտութեան մեջ, որտեղ երեւան են գալիս նույն միտքն արտահայտող բազմապիսի կառուցվածքներու Օրինակ՝ «Ե՛րբ մտնենում էինք դպրոցին, հանդիպեցինք Վարդանին» և «Դպրոցին մտնենալիս հանդիպեցինք Վարդանին»:

Տարբերակների կամ զուգաձեռնութեանների առաջացումը կամ դրանց գոյութիւնը լեզվում պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Առաջին պայմանը լեզվի կառուցվածքային հնարավորութիւններն են, որոնք հիմք են հանդիսանում զուգաձեռնութեանների առաջացման համար: Այսպէս, օրինակ, բառակազմական տարբեր կադապարների հիմքի վրա առաջացած՝ ժամանակակից հայերենում գոյակցում են ողջամիտ-ողջմիտ, քաղաքացի-քաղաքացի, ջրաղացաբար-ջրաղացբար, հնչարարութեան-հնչարարութեան, լայնաթուփ-լայնթուփ և այլ կարգի բազմաթիւ այլ բառային զուգահեռներ: Գոյակցում են նաև բառային այնպիսի զուգահեռներ, ինչպէս՝ երգաշար-երգաշարք, սյունաշար-սյունաշարք, հոգիածաշար-հոգիածաշարք, աստղալի-աստղալից, վշտալի-վշտալից, հուսալի-հուսալից, կալված-կալվածք, ասացված-ասացվածք, հյուսհյուսք, զուգորդում-զուգորդութիւն, առնմանում-առնմանութիւն, ծագումաբանական-ծագումաբանական, սաղմային-սաղմային, ընդհանրական-ընդհանրական և այլն:

Հնչյունական համարադրով է պայմանավորված գրաւոր հայերենում գոյակցող բառերի արտասանական ալեպիտի տարբերակների գոյութիւնը, ինչպէս՝ մի[ջ]ին—մի[շ]ին, ող[ջ]ուն—ո[խշ]-ուն, ար[ձ]ակ—ար[ց]ակ, մի[ջ]ազգային—մի[շ]ազգային, խորհուր[դ]—խորհուր[թ] և այլն, քանի որ հայերենին հատուկ են և՛ իջ, ղջ, բձ, բղ (հմմտ. Միջագետք, գաղջ, ողջախոհ, լորձ, սարդ), և՛ իշ, խշ, բց, բթ (հմմտ. միջև, աղջիկ, փորձ, վարդ—մ[իշ]և, ա[խշ]իկ, փո[րց], վա[րթ]) հնչյունազուգորդումները:

Հնչյունական համարադրին չեն հակասում արտասանական այնպիսի զուգաձեռնութիւններ, ինչպէս՝ զգալ—[ը]զգալ, ստանալ—[ը]ստանալ, սկսել—[ը]սկսել, շտապել—[ը]շտապել և այլն:

Զուգաձեռնութիւն կա նաև որոշ բառերի շեշտադրութեան մեջ, օրինակ՝ օ՛պերա—օպերա՛, ռա՛դիո—ռադիո՛, ստո՛ւդիա—ստուդիա՛, ո՛րքան—որքա՛ն, նա՛մանական—նականական՛դ և այլն:

Հայոց լեզվի ներկա փուլում ձևաբանության մեջ ևս գոյակցում են ռազմապիտի զուգաձևություններ, որոնց առաջացումը պայմանավորված է լեզվի կառուցվածքով: Դրանք հատկապես աչքի են ընկնում խոնարհման համակարգի հրամայական ձևերում: Օրինակ՝ զրեցե՛ք-զրե՛ք, նստեցե՛ք-նստե՛ք, մի՛ բարձրանա-մի՛ բարձրացիր, մի՛ բարձրանաք-մի՛ բարձրացեք և այլն:

Չուգաձևություններ կան հոլովակա՛ն համակարգում, ինչպես՝ ծաղմա՛ն-ծաղումա՛ն, կորստա՛ն-կորստի, տարու-տարւա, ձյան-ձյու-նի, ժամվա-ժամի, աղախնի-աղախու և այլն:

Չուգաձևությունների կա՛մ տարբերակների առաջացման համար արդյուր վարող են ծառայել պատմական տեղաշարժերը, որոնք հաճախ փախավտրվում են լեզվի ընձեռած կառուցվածքային հնարավորությունների հետ:

Լեզուն անընդհատ փոփոխվող և զարգացող երևույթ լինելով, ամեն մի տվյալ փառաշրջանում իր մեջ պարունակում է մ' մեծությունը, և՛ զարգացողը: Լեզվում առաջացած ամեն մի փոփոխություն ենթադրում է լեզվական իրողությունների ժամանակավոր համագոյակցություն, ուստի նորմայի սահմաններում այս կարգի տարբերակների գոյությունը օրինաչափ է և անխուսափելի:

Այսպես, օրինակ, ու-ով վերջացող բազմական բառերի սեռական հոլովում ավանդական ժողովածվի, հավաքածվի, դասառվի, թեկնածվի ձևերին զուգահեռ առաջացան առանց հնչյունափոխության ժողովածուի, հավաքածուի, դասառուի, թեկնածուի ձևերը, որոնք միատեսակա՛ն զուգահեռաբար գործածվելուց հետո դուրս մղեցին ավանդական ձևերը:

Բաղմասերի օրինակներ կարելի է բերել թե՛ հոլովաձևերից, որոնք կաղմավում են հնչյունափոխությունների և առանց հնչյունափոխության: Դա հատկապես փնտրվում է բառավերջի փակ վանկում ու, ի ունեցող բառերի թեքված ձևերին, ինչպես՝ կոշկի-կոշիկի, ծաղկի-ծաղիկի, հովտի-հովիտի, կավճի-կավիճի, վրձնի-վրձինի, ուսուցչի-ուսուցիչի, նախդրի-նախդիրի, նարնջի-նարինջի, գրչի-գրիչի, շապկի-շապիկի, կսկծի-կսկիծի, բջջի-բջիջի, ոճրի-ոճիրի, փոթոգի-փոթորիկի, կացնի-կացինի, արճի-արճիճի, Մասսի-Մասիսի, գեղեցկի-գեղեցիկի, գոհի-գոհիկի, կամուրջի-կամրջի, կորստի-կորուստի, բազկի-բազուկի, կրակի-կրոնկի, կտցի-կտուցի, պտկի-պտուկի, ծծմբի-ծծումբի, չմշկի-չմուշկի, մածնի-մածու-նի, երկաթի-երկտաթի, լեռնա՛նի-լեռնասո՛նի, տղրկի-տղրուկի, տեսչի-տեսուչի, թռչնի-թռչունի, բլրի-բլուրի և այլն: Բազմական բառերի

թերզված ձևերում երևան եկող այս զուգաձևությունը լայն տարածում է ստացել և շատ բնորոշ է այժմյան փուլում: Միտումն ակընհայտ է. հնչյունափոխվող ձևերն աստիճանաբար տեղի են տալիս անհնչյունափոխ ձևերին: Համեմատիր, օրինակ, կես դար առաջ կանոնական ակմբի, կտրնի, դանլի, մրրկի, ձմերկի, թմբկի, մատնչի, սրբագրչի, մրնի, սրնի, տփի, դփսի և այլ ձևերը, որոնք դուրս են մղվել և ներկայումս հաստատումն կերպով գործածվում են անհնչյունափոխ ձևերով՝ ակումբի, կտրիճի, դանլիճի, մրրիկի, ձմերուկի, թմբուկի, մատնիչի, սրբագրիչի, մուրնի, սուրնի, տուփի, դուփսի և այլն: Այսպիսի տեղաշարժ է տիրում նաև բառակազմության մեջ (հմտ. լուսային-լույսային, ճնշութաբանական-ճնշութաբանական և այլն):

Այստեղ ևս կարող ենք ասել, որ լեզվական համակարգը ընձեռում էր այդ հնարավորությունը, քանի որ հարեւոյնում նույն տիպի շատ բառեր թեթեւեւ ժամանակ չեն հնչյունափոխվում, ինչպես՝ ճատիկի, եղնիկի, երշիկի, տիկնիկի, տարիքի, գաղտնիքի, ճեղուկի, խանութի, ուտուցի, մատուտի, արդուկի, ծերուկի, աշուղի և այլն:

Լեզվական շատ զուգաձևություններ ունեն ոճական նշանակություն և օգտագործելի են տարբեր հանգամանքներով և իրադրություններով պայմանավորված: Օրինակ, հոգնակի թվում մենք ունենք գյուղացիներ-գյուղացիք, ֆաղափացիներ-ֆաղափացիք զուգաձևությունը, սակայն Բ-ով ձևերը սկսել են դիտվել որպես հնաբանություն և թույլատրելի են համապատասխան ոճում: Ունենք նաև տիկիճներ-տիկնայք, պարոններ-պարոնայք, տղաներ-տղերք, աղջիկներ-աղջկերք և այլն: Նշված զուգաձևությունները նույնպես վերաբերում են գրական լեզվի որոշակի ոճերի: Նշանակում է, գրական նորմայում գոյակցող տարբերակների մի մասը հանդես է գալիս որպես պարտադիր և հանձնարարելի, իսկ մյուս մասը՝ թույլատրելի տարբերակներ՝ միայն գրական լեզվի համապատասխան ոճում:

Մի շարք դեպքերում բառերի ավանդական ձևերի կողքին երևան են գալիս նորերը, որոնք որոշ ժամանակ գոյակցում են, ինչպես՝ օրորան-օրրան, կապկապել-կապկապել, բաղանիք-բաղնիք, ավելել-ավլել և այլն:

Բառային զուգաձևությունների աղբյուր կարող է ծառայել մեծ գրական լեզուն, օրինակ ստեպղին—գագար, ագաթեղ—մաղաղանոս և այլն: Բառային տարբերակների առաջացման համար հարուստ աղբյուր է գրական արևմտահայերենը, ինչպես՝ պոմի-

դոր—լուիկ, բաղրիջան—սմբուկ, դիրեկտոր—տնօրեն, ռադիո—
ձայնասփյուռ, կինո—շարժապատկեր, ավտոմեքենա—ինքնաշարժ,
կոմպոզիտոր—երգահան և այլն: Տարբերակների առաջացման հա-
մար աղբյուր կարող են ծառայել նաև բարբառները, որտեղից լեզ-
վական որոշ երևույթներ խոսակցականի միջոցով թափանցում են
գրական լեզվի մեջ (հմմտ. կարպետ, նամիփա, բերեի, արցունք և
այլն):

Գրական լեզվի շրջանառված գոյացող տարբերակների բը-
նույթը կարող է տարբեր լինել: Տարբերակների մի մասը (և՛ հըն-
չունական -արտասանական, և՛ բառային, և՛ ձևաբանական) հան-
դես է գալիս որպես հավասարազոր, լիիրավ զուգահեռներ, և դժվար
է դրանցից մեկնումեկին գերապատվություն տալ, ինչպես, օրինակ՝
տղջամփտ-տղջմփտ, ամլըռնապըռա-անլըռնապըռաիկ, աղրտառուք-ար-
ցունք, մի[ջ]ազգային-մի[յ]ազգային, վրձնի-վրձինի, մի՛ գնաք-
մի՛ գնացեք, [ը]տպիտակ-սպիտակ, [ը]զգացում-զգացում: Այսպի-
սի տարբերակները ազատորեն փոխարկվում են մեկը մյուսին:

Տարբերակների մյուս մասը, որոնք անվորապար անվերջ շատ
են, թեև գրական նորմայի տեսակետից չեն դիտվում որպես շեղում,
բայց հավասար արժեք չունեն: Այդպիսի տարբերակները սովորա-
բար տանն են վերառնված տարբեր շրջանառված և կարող են հաս-
կացվել տարբեր թճերի վրա՝ ուղղություն: Այդպիսի տարբերակներից
հանձնարարելի կամ նախապատվելի է համարվում սովորաբար
միայն մեկը, իսկ մյուսը թույլատրելի՝ համապատասխան տճի դեպ-
քում:

Այս խմաստում մեծ կարևորություն է ստանում նաև լեզվի
գործառական (ֆունկցիոնալ) երկու հիմնական տարատեսակների՝
գրավոր և խոսակցական ձևերի, ինչպես և լեզվական մյուս տարբե-
րակումների հարցը՝ տեղային, տարիքային, մասնագիտական և
այլն, որոնք հաճախ խաչաձևվում են մեկը մյուսի հետ⁷:

Զանդրադարձաբանական լեզվի տեղային, մասնագիտական, տարի-
քային տարբերակումների հարցերին, փորձենք նշել հայերեն գրա-
կան լեզվի գրավոր և խոսակցական գոյաձևերը տարբերակող որոշ
առանձնահատկություններ:

Ժամանակակից հայերենում գրական գրավոր լեզվի կողքին

⁷ Ոմանք լեզվի ֆունկցիոնալ երկու հիմնական տարբերակումները կամ ձևերը՝
գրավոր և խոսակցական, անվանում են ոճեր (տե՛ս Р. А. Будагов, նշվ. աշխ., էջ
67):

իրողություն պետք է համարել գրական լեզվի խոսակցական տարբերակի գոյությունը, որ բանավոր հաղորդակցման ամենից ավելի զործուն ձևն է: Այդ լեզվում ոչ միշտ են պահպանվում գրական լեզվի նորմաները, սակայն դա ոչ բարբառ է, ոչ միջբարբառային լեզու, և ոչ էլ հասարակաբանական լեզու: Գրական լեզվի խոսակցական դոյաձևը կիրառվում է առօրյա հաղորդակցման հարաբերություններում՝ ընտանիքում, ընկերական շրջապատում, աշխատանքային ոչ պաշտոնական միջավայրում և այլն: Դա ոչ պաշտոնական հարաբերությունների ժամանակ որպես հաղորդակցման միջոց օգտագործվող անկաշկանդ, անբռնազրոս լեզուն է:

Այդ լեզուն կարելի է ֆոնոթագրել քառային, քերականական, արտասանական մի շարք առանձնահատկություններով, որոնցով նա տարբերվում է ինչպես գրավոր լեզվից, այնպես էլ հրապարակային և պաշտոնական խոսքից: Գրական գրավոր լեզվին (գրքային լեզու) շատ մոտ է բանավոր պաշտոնական կամ հրապարակային լեզուն (դասախոսություն, ճառ, զեկուցում, ելույթ, պաշտոնական խոսակցություն), որը գրքային կամ գրավոր լեզվից տարբերվում է փոքր չափով:

Խոսելով գրական լեզվի խոսակցական տարբերակի մասին, մենք նկատի ունենք այն լեզուն, որով խոսում են գրական լեզվին լիովին կամ մասնակի կերպով տիրապետող անձինք:

Ներկայումս մեծ կարևորություն է տրվում գրական գրավոր և խոսակցական ձևերի փոխհարաբերությունների ուսումնասիրման հարցերին⁸:

Տարբեր լեզուներում լեզվի կիրառության այս երկու ոլորտները ներկայանում են տարբեր հարաբերությամբ: Գրականության մեջ նշվում է, օրինակ, որ գերմաներեն, չեխերեն, իտալերեն լեզուները որպես բանավոր լեզու գերազանցապես օգտագործում են առօրյա խոսակցական լեզվի զանազան տարբերակներ, իսկ գրական լեզվի բանավոր ձևի կիրառությունը շատ սահմանափակ է⁹: Այս տեսա-

⁸ Խոսակցական լեզվի ուսումնասիրությունը հայրենական լեզվաբանության մեջ դեռևս իր առաջին քայլերն է անում: Այդ հարցերով հատկապես զբաղվել են գերմանական և ֆրանսիական լեզվաբանները: Գերմանիայում, սկսած XIX դարի վերջերից, պարբերաբար լույս են տեսել գերմաներեն խոսակցական լեզվին նվիրված մի շարք ուսումնասիրություններ որոնք ընդհանուր կերպով կրում են Umgangssprache անվանումը:

⁹ Տե՛ս P. A. Bydago, նշվ. աշխ., էջ 81 և շարունակությունը:

կետից շատ բնորոշ է հայերենը, որի գրավոր և խոսակցական ձևավորի միջև եղած տարբերությունը բավականաչափ զգալի է¹⁰:

Նշենք, որ Լեֆե բարբառ և գրական լեզու ըմբռնումները որոշակի են, ասլա խոսակցական լեզվի¹¹ ըմբռնումը լեզվադասական գրականությունից մեջ հատակ չէ¹²:

Խոսակցական լեզուն հայերենի այն գոյաձևն է, որը հանգես է գալիս որպես բանավոր հաղորդակցման հիմնական միջոց: Անշուշտ, ինչպես վերևում ասացինք, պետք է տարբերակել գրական լեզվի բանավոր ձևը խոսակցական լեզվից: Այս փրկու ըմբռնումների միջև էական տարբերություն կա: Եթե գրական բանավոր լեզուն հանգես է գալիս որոշակի համակարգով և էապես չի տարբերվում գրավոր գրականից, ասլա ժամանակակից հայերեն առօրյա խոսակցական լեզուն մեր լեզվի զարգացման աշխարհում փոխում ներկայանում է որպես մի չափազանց բարդ, շատ հեղհեղուկ սահմաններ տանցող և վայրից վայր մեծ չափով տարբերվող (նայած թե որ քաղաքում կամ շրջանում է խոսվում) մի իրողություն, որտեղ մեծ դեր են կատարում մի շարք հանգամանքներ, ինչպես՝ տվյալ խոսողը ի՞նչ ընտանիքում է մեծացել, ծնողները ի՞նչ կրթություն ունեն և ո՞ր բարբառի ներկայացուցիչն են, որքա՞ն ժամանակ է, որ ապրում է տվյալ վայրում, քանի՞ տարեկան է, ի՞նչ կրթություն է ստացել, ի՞նչ մասնագիտության տեր է, ինչպիսի՞ միջավայրում է ապրում և աշխատում, լեզվի նկատմամբ ինչպիսի՞ ընդունակություններ է ցուցաբերում (օրինակ, կան մադղիկ, որոնք թեև լիովին տիրապետում են գրական լեզվին, սակայն չեն կարողանում ազատազրկել մայրենի բարբառի արտասանական որոշ առանձնահատկություններից, և նրանց լսելով անմիջապես որոշում են որտեղացի լինելը) և այլն:

¹⁰ Այս մասին նշել են շատերը:

¹¹ Խոսակցական լեզու տերմինը օգտագործում ենք պայմանականորեն, որովհետև տվյալ դեպքում մենք գործ ունենք «խոսք» հասկացության հետ:

¹² Ումանք, օրինակ, խոսակցական լեզուն նույնացնում են բանավոր խոսքի հետ (տե՛ս Б. Шапиро, Очерки по синтаксису русских народных говоров, М., 1953, էջ 6), կամ այդ ասելով նկատի են ունենում ոչ թե գրական լեզվի խոսակցական տարբերակը, այլ առհասարակ անմիջական հաղորդակցման ոլորտը, որտեղ գործառում են և՛ բարբառ, և՛ կիսաբարբառ, և՛ հասարակարանություն և այլն (տե՛ս Вопросы социальной лингвистики, Ленинград, 1969, էջ 376—377):

Հայ լեզվաբանական դրականության մեջ խոսակցական լեզու տերմինը մեծ մասամբ գործածվում է հենց այդ իմաստներով: Որպես սրան համանիշ՝ հաճախ կիրառվում է նաև ժողովրդախոսակցական լեզու տերմինը:

Այսպիսով, ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն կարելի է բնութագրել որպես մի բավականաչափ խախտաբեկ և բազմապիսի մասնավոր տարատեսակություններով հանդես եկող իրողություն, որտեղ մի շարք երևույթներ գրական նորմայի տեսակետից անհատվում են որպես սխալներ և շեղումներ: Խոսակցական լեզվի սահմանները, մի կողմից՝ բանավոր գրական լեզվի, մյուս կողմից՝ ժողովրդախոսակցականի միջև, հստակորեն առանձնացված և գծված չեն:

Եթե դրական լեզուն և բարբառները հանդես են գալիս որպես որոշակի համակարգեր, ապա խոսակցական լեզուն աչքի է ընկնում լեզվական իրակությունների բազմապիսի զուգաձևություններով, որոնք դժվարացնում են որոշակի կանոնների կամ նորմայի մշակումը, ինչպես և նրա նկարագրությունը:

Խոսակցական լեզուն իր որոշ առանձնահատկություններով տարբեր է մայրաքաղաքում և Հայաստանի մյուս քաղաքներում ու շրջաններում խոսվող լեզվից: Մայրաքաղաքում խոսակցական լեզուն ավելի մոտ է գրական բանավոր լեզվին, քան ասենք Կիրովականում, Լենինականում, Ստեփանավանում, Ալավերդում և այլն: Գյուղական վայրերում բարբառին զուգահեռ գործածվող խոսակցականը մեծ չափով ենթարկված է տվյալ վայրի բարբառի ազդեցությանը:

Այսպիսով, խոսակցական լեզուն մի շարք առանձին հատկանիշներով հնչյունական, ձևաբանական, բառային, տարբերվում է ըստ վայրերի:

Այս սովորով հանդերձ, մեր պատկերացումով, ժամանակակից հայերեն գրական լեզուն (արևելյան տարբերակը) հանդես է գալիս երկու հիմնական գոյաձևերով՝ գրավոր և խոսակցական: Գրավոր (գրքային) լեզուն կարող է արտահայտվել և բանավոր կերպով (հրապարակային, պաշտոնական խոսք): Խոսակցական լեզուն, թեև, ինչպես ասացինք, դրսևորվում է բազմապիսի տարատեսակություններով, այնուամենայնիվ դրա մեջ կարելի է տարբերակել երկու հիմնական ոճ՝ խոսակցական-դրական և խոսակցական-մտերմական: Խոսակցական-դրական ոճը ավելի մոտ է գրավոր լեզվին, խոսակցական-մտերմական ոճի հետ սերտորեն կապված են հասարակաբանությունները, ժարգոնները և վերջապես՝ բարբառը: Այս բոլոր ոլորտները միջնորդավորված և երբեմն ուղղակի ձևով կապված են իրար հետ:

Գրական գրավոր լեզուն մի կուռ համակարգ է, որն իր մեջ տարբերակում է մի շարք ոճեր՝ գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական, գրասենյակային—պաշտոնական և այլն:

Առօրյա խոսակցական լեզուն գրական լեզվի կենդանի խոսքն է, որտեղ երևան է գալիս հայ ազգային լեզվի ամբողջ հարստութիւնը՝ լեզվաարտահայտչական բոլոր միջոցներով և հատկապես ճոխ դարձվածաբանությամբ: Խոսակցական գոյածեր իր արտացոլումն է գտնում գրական լեզվի գեղարվեստական ոճում:

Դրական լեզվի գրավոր և խոսակցական ձևերը գտնվում են մշտական փոխանդործության մեջ: Գրավոր լեզվից շատ տարրեր՝ քառադյոն, ձևաբանական, շարահյուսական, թափանցում են խոսակցականի մեջ և հակառակը՝ կենդանի խոսակցական լեզվից ժողովրդաարտահայտչական շատ միջոցներ՝ բառեր, ոճեր, քերականական ձևեր, թափանցում են գրավոր լեզվի մեջ:

Խոսելով խոսակցական լեզվի մասին, անհրաժեշտ է նկատի ունենալ բարբառային հիմքի վրա առաջացած քաղաքային հասարակարանական «լեզուն», որի ուժեղ ազդեցության տակ է գտնվում խոսակցական-մտերմական ոճը: Հասարակարանական «լեզուն» մի կապող ուղակ է բարբառի և գրական լեզվի միջև: Քաղաքային հասարակարանական «լեզվի» մեջ տարրադրվում են բարբառային շատ իրարդրվողուններ և պարոմոսովում այնպիսի գծեր, որոնք թեև առաջացել են բարբառային հոգի վրա, բայց հատուկ չեն կոնկրետ որևէ բարբառի: Դրանք ասելի շատ բարբառների մեծ մասին կամ համաժողովրդական լեզվին հատուկ առանձնահատկություններ են: Այդպիսի «լեզուն» ընդհանուր առմամբ հաստատ է կրթական ցածր մակարդակ ունեցող մարդկանց: Այս կարգի որոշ երևույթներ թափանցում են խոսակցական-մտերմական ոճի մեջ, իսկ այստեղից էլ գրական գրավոր լեզու: Նշենք նաև, որ հասարակաբանական «լեզուն» տերմինն օգտագործում ենք պայմանականորեն, քանի որ այդ տեղով նկատի ունենք միայն հասարակարանականություններով երանգավորված լեզուն, որը հանդես չի գալիս որպես մի ինքնուրույն համակարգ: Հասարակարանականությունները մեծ մասամբ քաղաքային խոսակցական լեզուն հղանդավորող արտահայտչական մի շարք միջոցներ են՝ համապատասխան բառեր, արտահայտություններ, քերականական ձևեր, հնչյունական-առասանական երևույթներ և այլն:

Գոյություն ունի հասարակաբանությունների երկու տեսակ: Հասարակարանականությունների մի տեսակը օգտագործվում է գեղարվեստական գրականության մեջ՝ ունենալով համաարատախան երանգավորում հարդորներու նպատակով, օրինակ՝ քսաբել, դմբո, եսիմ, զավզակ, դոդ-գլիս, ճայվան և այլն: Այս կարգի բառերը, որ կարող

է օգտագործել ամեն մի կրթված մարդ համապատասխան իրադրության ժամանակ, զետեղվում են մեծ մասամբ նաև բառարաններում, ունենալով համապատասխան նշումներ (հայերեն բառարաններում այդ կարգի բառերը սովորաբար ունենում են «բարբառային» կամ «խոսակցական» նշումներ)։ Հասարակաբանությունների մյուս տեսակը հիմնականում բառային աղավաղումներ են, ինչպես՝ սրջան (շրջան), սունչ (շունչ), Շաշիկ (Սաշիկ), հան[դ]րակացաբան, հույր (հյուր), համայրա (համարյա), կակա[վ]ո, դերեկտոր (դիրեկտոր), հաղվագույտ (հազվագյուտ) և այլն։ Սրանք բառարաններում տեղ չեն գտնում և մեծ մասամբ երևան են գալիս կիսագրագետ մարդկանց խոսքում, Հասարակաբանությունների այս տեսակը ոճական նկատառումներով գեղարվեստական գրականության մեջ արտացոլվում է հազվադեպ (տե՛ս Փ. Մ. Փալախ, О структуре современного русского литературного языка, ВЯ, 1973, № 2, էջ 8—9)։

Փորձենք ցույց տալ մի շարք այնպիսի գծեր, որոնք, ի տարբերություն գրական գրավոր լեզվի, բնորոշ են գրական լեզվի խոսակցական տարատեսակին¹³։ Որոշ դեպքերում նշում ենք նաև համապատասխան հասարակաբանությունները և ժարգոնաբանությունները, որոնք երևան են գալիս սովյալ ոլորտում։

Ա. Հնչյունական-առասանական առանձնահատկություններ

Նախ և առաջ նշենք, որ նկարագրվող երևույթները կարող են ունենալ լայն ընդգրկում, երբեմն կրելով համակարգային բնույթ և վերաբերել մեկ կամ մի խումբ բառերի։

1) Այս, այդ, այն դերանուններում և դրանցով կազմված բազմաթիվ բառերում այ բրկբարբառին փոխարինում է է պարզ ձայնավորը, ինչպես՝ այս-էս, այդ-էդ, այն-էն, այսքան-էսքան, այնքան-էնքան, այդքան-էդքան, այստեղ-էստեղ, այնտեղ-էնտեղ, այդտեղ-էդտեղ, նաև՝ էսպես, էնպես, էդպես, էսինչ, էդինչ, էնինչ, էստեղից, էնտեղից, էդտեղից, էսինչից, էնինչից, էդինչից և այլն։

Այստեղ նկատի չեն առնվում այնպիսի բառեր, ինչպես՝ հայր, մայր, այծ, ծայր, սայլ, գայլ, փայտ և այլն, որոնց [է]-ով արտասանությունը որոշակիորեն բարբառային է, ինչպես՝ հեռ, մեռ, էծ, ծեռ, սել, գել, փետ և այլն։ Իրավացիորեն կարող է հարց առաջա-

¹³ Մենք նպատակ չենք դնում այստեղ տալ այդ տարբերությունների կամ առանձնահատկությունների սպառիչ նկարագրությունը։ Պարզապես ուզում ենք նշել մի քանի հատկանիշներ, որոնք կարող են բնութագրել գրական լեզվի գրավոր և խոսակցական տարբերակները։

նալ, թե ո՞րն է շափախիշը, քանի որ մի դեպքում այն—ե փոփոխությունը դիտվում է խոսակցականին հաստուկ երևույթ, այսինքն՝ ոչ բարբառաչին, իսկ մեկ ուրիշ դեպքում՝ բարբառաչին: Չափախիշը առյատեղ երևույթի հասարակական ըմբռնումն է, հասարակական գնահատությունը, թեև ակունքը նույնն է:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ներկայումս փոսակցական լեզվում էս, էդ, էն դերանուններով կազմված բառերին զուգահեռ մեծ չափով առարածված են նաև դրանց ը-ով ձևերը, ինչպես՝ ըստեղ, ըտեղ, ընդեղ, ըսքան, ըտքան, ընքան, ըտքան, ընքան (նաև՝ էսքան, էտքան, էնքան) կամ ուղղակի՝ սեքան, եքան, աքան, սքան: Միայն այստեղ բառը, օրինակ, ունի հետևյալ տարատեսակությունները՝ էստեղ, ըստեղ, ստեղ, ստի, ըսաի, ստե, էստի, էսսե, ըստե և այլն: Բայց այս ձևերը, որոնք երևան են գալիս ժամանակակից հայերեն խոսակցական լեզվում, մեծ մասամբ մերժելի են¹⁴:

2) Գրական օրինակների արտասանությունը պահանջում է կեղանակիչից և չփխտականից հետո արմատի սկզբնատառ ե-ն և ու-ն բառամիջի ե-ի և ու-ի արտասանության կանոնների համաձայն հնչել [է] և [օ]: Արտասանական այս կանոնը սովորաբար պահպանվում է ասմունքում, հաղորդավարական խոսքում և ընթերցանության ժամանակ: Մինչդեռ խոսակցականում կ-ն և շ-ն առանձնացվում են որպես կը և շը և ը-ից հետո արտասանվում [յէ] և [յօ]: Համեմատիր, օրինակ՝ կորոշի [կօրօշի] և [կըվօրօշի], կերպի՝ [կէրպի] և [կըրէրպի], կենթադրենք՝ [կէնթադրենք] և [կըրէնթադրենք], չորոշել՝ [չօրօշէլ] և [չըվօրօշէլ], չերգել՝ [չէրգէլ] և [չըրէրգէլ], կոգեշնչի՝ [կօգէշնչի] և [կըվօգէշնչի] և այլն¹⁵:

3) Զգույշ, աշխույժ, տույժ, բույն, վիրաբույժ, ակնաբույժ և բույժ արմատով վերջացող այլ բառեր խոսակցականում մեծ մասամբ արտասանվում են առանց յ-ի (մանավանդ առաջին չորս բառերը)՝ [զգուշ], [տշխուժ], [տուժ], [բուն], [վիրաբուժ] և այլն:

4) խոսակցական լեզվին ավելի թնորոշ են հնչյունների փոխադրեցություն մի շարք երևույթներ, հնչյունների սղումներ, անկումներ

¹⁴ Վերջերս զգալի տարածում են ստացել էսի, էտի, էնի ձևերը (նաև դպրոցականների մեջ), որ շատ ցավալի երևույթ է:

¹⁵ Նկատելի է, որ այժմ խոսակցականի յ-ով և վ-ով արտասանությունը շատ դեպքերում թափանցում է նաև գրական բանավոր լեզվի մեջ (հրապարակային խոսք):

(մեծ մասամբ ձայնավորների) և այլն: Օրինակ՝ [ստէսթ'յուն]¹⁶, [շէնօրակաթ'յուն], [յէրաշտութ'յուն], [համաաարան], [կաննավօր] (հմմտ. ցտեսութ'յուն, շնորհակալութ'յուն, երաժշտութ'յուն, համալսարան, կանոնավոր): Խոսակցականում հնչույթների շեղօքացման դերը մեծանում է, որոշ հնչույթներ կարող են ամենևին չարտասանվել:

5) Խոսակցականում օտարազգի մի շարք բառերի, հատկապես անձնանունների անշեշտ ու-ի ա կամ ը արտասանությունը սովորական է և չի գիտվում շեղում: Օրինակ՝ [Վալօդյա], [Բարիս], [Կալցօվ], [Բանդարէնկօ], [Յակըվչէվ], [Իգըր], [Տիխընըվ], [կատլէտ], [պամիդօր], [կանֆէտ] և այլն (հմմտ. Վոլոդյա, Բորիս, Կոլցով, Բոնդարենկո, Յակովլև, Տիխոնով, Կոտլետ, պոմիդոր, կոնֆետ):

6) Խոսակցական լեզվում հարցական նախադասություններում ձայնը սովորաբար բարձրացվում է օժանդակ բայի վրա (եթե նախադասության մեջ հարցական բառ չկա): Օրինակ՝ Եղբայրդ վերադարձել է՞. «Բառսը» կարդացել ե՞ս. Հիմա ե՞ք իջնում. Կինո ե՞ս գնում. Գալիս ե՞ս տուն և այլն: Այս հնչերանգը խոսակցականում անշուշտ միակը չէ, բայց շատ տարածված է, տարբերվելով գրքային հնչումից, ըստ որի շեշտվում է բային կամ օժանդակ բային նախորդող բառի վերջավանկը, ինչպես՝ Եղբայրդ վերադարձե՞լ է. Հիմա՞ ե՞ք իջնում. Կինո՞ ես գնում. Գալի՞ս ես տուն: Այս հնչերանգն է սովորաբար պահպանվում և բեմական խոսքում:

Խոսակցականում որպես հասարակաբանություն պետք է դիտել ը-ի անհարկի արտասանությունը, ինչպես՝ վճ[ը]ռեց, կշ[ը]ռադատել, հաղթ[ը]վել, պարտ[ը]վել, թրջ[ը]ված, կրկ[ը]նել, խրտ[ը]նել, կնճ[ը]ռոտ, Բարձ[ը]րացնել, երկ[ը]րի, արծ[ը]վի և այլն:

Հասարակաբանական հնչում ունի նաև բառավերջում ը ափեղացնելը այնտեղ, որտեղ այն չի գրվում: Օրինակ՝ յոթ[ը] անգամ, մութ[ը] տեղ, թարմ[ը] միս, պետք[ը] կգա, պետք[ը] չի, ո՞ւմ[ը] տվեցիր, ութ[ը] հոգով, տասնհինգ[ը] ռուպե և այլն:

Որպես հասարակաբանություն ներկայումս խոսակցականում բավականաչափ տարածված է եցն-ով կազմվող բայերում ե-ի փոխարեն ա կամ ր հնչելը, վերջինս երբեմն կարող է արտասանվել և ոչ սղված ձայնավորի տեղում: Օրինակ՝ վախեցնել-վախացնել-վախց[ը]նել, զզվեցնել-զզվացնել-զզվ[ը]ցնել, խոսեցնել-խոսաց-

¹⁶ Տառի վրա վերևից դրվող ['] նշանը ցույց է տալիս հնչյունի քմայնացած արտասանությունը:

նել-խոսց[ը]նել, և խոս[ը]ցնել, ինչպես և՛ հարմարացնել, հիշաց-
նել, համաձայնացնել, զբաղացնել, պարզացնել, խրտնացնել, հա-
վասարացնել, հաջողացնել, նաև՝ խոսացրու-խոսց[ը]րու, վա-
զացրու-վազց[ը]րու, հաջողացրու-հաջողց[ը]րու և այլն:

Հասարակաբանական բնույթ է կրում ներկայումս ն-ից, ր-ից
հետո խաղ, ա, ւ, կ, ծ, ց հնչյունների ձայնեղացումը, փնչպես՝ ըն-
[գ]եր, ըն[գ]ել, որ[դ]եղ, գոր[ծ], ամ[բ], եր[գ]ար, հար[գ]ա-
վոր, ճան[ջ] և այլն: Ձայնավորների միջև խոսքերի ձայնեղ արտա-
սանդակում, որ խոսակցականում հանդիպում է ոչ հազվադեպ,
ինչպես՝ շա[բ]իկ, ա[բ]բուստ, գե[դ]ին, շա[դ]ախոս և այլն, ունի
բարբառային բնույթ:

Խոսակցական ոլորտում մեծ նշանակություն են ստանում ելի-
վիզները, դիմախաղը, ժեստերը:

Բ. Ձևաբանական առանձնահատկություններ

Այս մակարդակում հայերենում հանդես են գալիս բազմաթիվ
գոսգոսակցություններ, որոնց մի մասը հասկանալիս բնորոշ է խոսակ-
ցական լեզվին: Նշենք գրանցից միայն մի քանիսը:

1) Խոսակցականում հրամայականի ձևերում հաճախ վերջին
ր-ն ընկնում է, ինչպես՝ խոսի[ր], գրի[ր], հաշվի[ր], կշռի[ր],
փաթաթի[ր], չափի[ր], կտրի[ր], նույնը ժխտականում՝ մի՛ խո-
սի[ր], մի՛ գրի[ր], մի՛ հաշվի[ր] և այլն: Հոգնակիում կանգնեցեմ,
նստեցեմ, խոսեցեմ, լռեցեմ ձևերի փոխարեն գործածվում են մեծ
մասամբ կանգնե՛մ, նստե՛մ, խոսե՛մ, լռե՛մ: Մի՛ խաղա՛, մի՛ քաղա՛-
րանա՛ ձևերի փոխարեն խոսակցական լեզվին հատուկ են մի՛ խա-
ղացե՛մ, մի՛ քաղա՛ցե՛մ ձևերը, ինչպես և՛ մի՛ քաղա՛ցե՛մ (հմմտ.
մի՛ քաղա՛ցե՛մ), մի՛ խոսե՛ցու, մի՛ քոցու, մի՛ քաղա՛ցու
(հմմտ. մի՛ խոսե՛ցիր, մի՛ քոցիր, մի՛ քաղա՛ցիր): Խոսակցա-
կանում ներկայումս տարածում են գտել արգելափակ հրամայականի
նաև մի՛՛մ նստի, մի՛՛մ խոսի ձևերը:

Բայերի խոնարհման ժամանակ խոսակցականին հատուկ են
նաև՝ պիտի չգամ (հմմտ. չպիտի գնամ), պետք է թույլ շտալ (հմմտ.
չպետք է թույլ տալ), ինչպես և՛ մի՛ տես (հմմտ. մի՛ տեսնիր), մի՛
առ (հմմտ. մի՛ առնիր), մի՛ տուր (հմմտ. մի՛ տա), մի՛ տվեք
(հմմտ. մի՛ տաք) ձևերը:

2) Խոսակցականին բնորոշ են աֆիսի բառաձևեր, ինչպես՝
արի (հմմտ. եկ), ասեցի, ասի (հմմտ. ասացի), գիտի (հմմտ. գի-

տե), բերի (հմմտ. բերեցի), տվի (հմմտ. տվեցի), տանը չի, տեղում չի (հմմտ. տանը չէ, տեղում չէ)։

3) Բառերի հոլովական ձևերում մասնակի դրսևորումներ ունեցող հոլովումները հաճախ փոխարինվում են ի հոլովումով, ինչպես՝ արյունի (հմմտ. արյան), ձյունի (հմմտ. ձյան), ծաղումի (հմմտ. ծաղման)։

Այս մտկարդակում քիչ չեն նաև հասարակաբանական դրսևվորումները, ինչպես՝ տղեն, երեխեն, տղու, ոչ ոքու, իջնելուց (հմմտ. իջնելիս), երգելուց (հմմտ. երգելիս), չեմ տալի, չեմ գալի (հմմտ. չեմ տալիս, չեմ գալիս), չի գրե, չի բերե, չի վերցրե (հմմտ. չի գրել, չի բերել և այլն)։

Ամենաաչքի ընկնող հատկանիշը քաղաքային հասարակարանական լեզվում¹⁷ է օժանդակ բայի փոխարենն և գործածելն է՝ ասում և, բերում և, տալիս և և այլն։ Միմիայն այս ձևի գործածությունը բավական է, որպեսզի խոսքին հաղորդվի հասարակարանական երանգ։ Ինչպե՞ս բնութագրել և-ն։ Այն անկասկած բարբառ չէ, որովհետև և են գործածում այնպիսի մարդիկ, որոնք որևէ բարբառի ներկայացուցիչ չեն, իրենց ծնողները նույնպես բարբառախոս չեն և ոչ էլ բարբառախոսների շրջապատում են ապրում։ Ա են գործածում մայրաքաղաքում ծնված և մեծացած դպրոցականները, ուսանողները (որոնց ծնողները բարբառախոս չեն), բանվորությունը, արհեստավորները, ինչպես և բարձրագույն կրթությամբ ստացած մասնագետների գերակշռող մասը անկաշկանդ, մտերմական զրույցի ժամանակ, ընտանիքում։ Ա-ն անմիջապես փոխարինվում է է-ով, երբ աշակերտը դիմում է ուսուցչին, ուսանողը՝ դասախոսին, կամ աշակերտը գաս է պատմում, ուսանողը հարց է տալիս և այլն։ Մրտեմական, անկաշկանդ խոսքում, մանավանդ երիտասարդների շրջանում, կարելի է համոզված ասել, չնչին բացառություներով և է գործածվում։ Իհարկե, կան նաև այնպիսիները, որոնք գիտակցաբար և սկզբունքորեն, հոգ տանելով իրենց լեզվի նկատմամբ, է-ով են խոսում նաև մտերմական զրույցի ժամանակ, ընտանիքում, իրենց ծնողների, երեխայի կամ ընտանիքի այլ անդամների հետ¹⁷։ Բայց դրանք թիվը փոքր է։ Շատ ավելի փոքր, քան և գործածողներինը։ Իսկ շատ դեպքերում էլ ռամանք խոսելիս խառը կերպով գործածում են մերթ է, մերթ՝ և։

Միաժամանակ ակնհայտ է և այն փաստը, որ և-ի գործածու-

¹⁷ Պետք է նկատի ունենալ նաև, որ է օժանդակ բայը փոփոխության չի ենթարկվում մի շարք բարբառներում։

թրանը ներկայումս գրական լեզվի ազդեցությամբ զգալիորեն նվազել է: Օրինակ՝ աշխատավարձում, տրանսպորտում, խանութում, փոստում, պաշտոնական անվարձում և առհասարակ անծանոթների միջավայրում հաճախ գործածվում է է: Դա պայմանավորված է մարդկանց կրթական ընդհանուր մակարդակի և խոսքի կուլտուրայի բարձրացումով: Սպասելի է, որ առօրյակ բայր խոսակցականում հիմնականում դուրս մղվի է-ի կողմից:

Դ. Շարանյութական առանձնահատկություններ

Մի շարք շատ ցատտոն առանձնահատկություններով է բնութագրվում նաև խոսակցական լեզվի շարանյութությունը: Խոսակցականին բնորոշ են մտքի արտահայտման հնարավորին չափ հակիրճ ձևեր, առանձնահատկ կառուցվածքի նախադասություններ՝ ազատ շարադասությամբ, մեծ մասամբ թերի, նախադասության ղեղաված որևէ անդամով, անշաղկապ և այլն¹⁸:

Խոսակցական լեզուն, ընկալման արագ, գերազանցապես դրսևորվում է երկխոսության (դիալոգ) ժամանակ, իսկ այս իրադրության մեջ կենդանի, երես առ երես հաղորդակցման պայմանը որոշակի փոփոխություններ է մտցնում մտքի արտահայտման ձևերի և կառուցվածքների մեջ: Այստեղ մեծ դեր է կատարում նաև խոսքի ինքնավարումը, ձևերի, գլխի, աչքերի շարժումը և այլն¹⁹:

Գրական գրավոր լեզվի և խոսակցական լեզվի ամենից ավելի ակնառու տարբերությունները բացի շարանյութությունից դրսևորվում են և բառապաշարում, ինչպես նաև հնչյունագում:

Դ. Բառապաշարային առանձնահատկություններ

Գրական լեզվի սահմաններում որոշակի կերպով առանձնանում են բառային երեք ոճեր՝ գրգռյին, շեգոֆ և խոսակցական: Հախրե-նի բառապաշարում գրգռյին ոճին պատկանող բառերը բավականաչափ շատ են, ինչպես՝ խոկալ, մաֆառել, դժնի, հաղիտ, սառա-րել, վեհերոտ, հիրավի, սույն, հանաչափայլ, որոտընդոտ, կեցու-թյուն, վարկած, ըմպել, վերստին, վարգել, անհոգողող, մանիկ, մանին և այլն, մինչդեռ այնպիսի բառեր, ինչպես՝ իրիկուն, էգուց,

18 Հմմտ. Ն. Պառնասյան, Շարանյութական համակարգերը ժամանակակից հայերենում, Երևան, 1970:

19 Կատարվել է ուսերեն խոսակցական լեզվի շարանյութության հանգամանա-լից ուսումնասիրությունը (տե՛ս Н. Ю. Уфеева, Очерки по синтаксису русской разговорной речи, М., 1960):

հերիք, պաշել, ծկել, պուճուր, սիրուն, չէ, տկուր, ճաքել, բլրացնել, դմբո, արանք, հա, հիմի, թափ տալ, հուպ տալ և այլն պատկանում են խոսակցական ոճին, խոսակցական ոճն են բնորոշում նաև բազմաթիվ դարձվածքներ՝ աչքերին թոզ փշել, մառնների արանքով նայել, զլուխ պահել, ծալքը պակաս, գլխի գցել, խելքի տոպրակ և այլն, Եվ փերջասրես այս երկու ոճերի կողքին կարելի է առանձնացնել չեզոք ոճի բառերը, բառեր, որոնք խոսքին որևէ երանգավորում չեն հաղորդում, ինչպես՝ ջուր, քար, հող, ծառ, մարդ, ուսանող, ուտել, գնալ, խոսել, կարմիր, սև, ես, նա, մեծ, վոք և այլն, Այս կարգի բառերը, որոնք բառապաշարի մեծ մասն են կազմում, կարող են հանդիպել և՛ բարձր ոճում, պաշտոնական խոսքում, հրապարակային ելույթներում, և՛ խոսակցականում։ Առօրյա լեզվում չեզոք բառապաշարի հետ միասին գործածվում են հատկապես խոսակցական ոճը բնութագրող բառեր։ Գրքային բառերը հատուկ են գրավոր գրական լեզվին և այդ լեզվի բանավոր դրսևորմանը (պաշտոնական, հրոսպարակալին խոսք)։

Խոսակցական լեզվում (դա առանձնապես բնորոշ է հայերենին) զգալի տեղ են դրավում հասարակաբանությունները, գոհակաբանությունները և ժարգոնային բառերն ու արտահայտությունները։

Որպես հասարակաբանություններ խոսակցականում հանգես են գալիս բարբառային կամ բարբառային հիմքի վրա առաջացած զանազան բառեր, ինչպես՝ կայնել, տենալ, էթալ, եսիմ, խի, բա, լա, հլա և այլն։

Պետք է ասել, որ խոսակցականը լեզվի ամենազգայուն ոլորտն է, որտեղ անմիջապես, երբեմն շատ դիպուկ կերպով լեզվական արտահայտություն են ստանում հասարակական կյանքում երևան եկած զանազան երևույթներ, բերենք վերջին շրջանում առաջացած այդ կարգի մի բանի օրինակներ, Տակից առնել նշանակում է հավելյալ դրամ վճարելով գնել վաճառասեղանի տակ թաքցրած որևէ ապրանք, տեսնել՝ կաշառք տալ (հմմտ. Նս նրան լավ տեսա), դասավորել՝ զարտուղի ճանապարհներով գործը իր օգտին դարձնել, ունենալ՝ ունենալ անօրինական մշտական եկամուտ (հմմտ. նա օրը այսքան ունի) և այլն։

Խոսակցական լեզվում տեղ են գտնում նաև զանազան տիպի գոհակաբանություններ, ինչպես՝ ռադ էլի, զանա մի տաք, զլուխս մի ցավացնի, պաշով (սա մի ժամանակ շատ տարածված էր հատկապես երիտասարդների շրջանում), ռեխդ հավաքի և այլն։

Խոսակցական լեզվում ուրույն տեղ ունեն ժարգոնային բառերն ու արտահայտությունները։ Ժարգոնի նկատմամբ առանձնապես

հակում ունի երիտասարդությունը: Ժարգոնային բառերը կամ արտահայտությունները, որոնք առաջանում են այս կամ այն միջավայրում, երբեմն տարածում են գտնում նաև հասարակության մյուս շրջաններում: Բայց պետք է ասել, որ ժարգոնային երևույթները մեծ մասամբ կրում են ժամանակավոր փուլի և լայնապես, օրինակ, 40-ական թվականներին դպրոցականների և երիտասարդության մեջ տարածված էին ալտարի առտահայտություններ՝ ժեշտ գցել, ժեշտ ընկնել՝ տհաճ անակնկալի առաջ կանգնեցնել մեկին, կամ տհաճ անակնկալի առաջ կանգնել, ջիջիլ գցել, ջիջիլ ընկնել՝ մի բանով գայթակղել կամ մեկի նախանձը շարժել, մի բանով գայթակղվել կամ նախանձ զգալ, զեֆս անել, զեֆս լինել՝ մեկին մի տեղից հեռացնել հակառակ կամքի, հակառակ կամքի մի տեղից հեռանալ (զեֆս-ը օգտագործվում էր նաև որպես նախազգուշական բացականչություն. հմմտ. Զեքս, ընկեր Գ.սպարյանը եկավ), շովառու գցել, շովառու ընկնել (երբեմն գործածվում է նաև այժմ)՝ իրարանցում բարձրացնել, իրարանցում գցել, իրարանցում ընկնել, գյոգ մտնել՝ աննկատելի մեկին հետևել, ճիճգ՝ յար, սիրած և այլն: Սը-րանը ասպարեզից վերացան, և երևան եկան նորերը:

Ներկայումս, ուսանողության և դպրոցականների շրջանում տարածված են ժարգոնային այլ բառեր և արտահայտություններ: Բերենք մի քանի օրինակ. աթանդա, որ գործածվում է ուշադրություն հրավիրելու նպատակով կամ որպես նախազգուշական բացականչություն, ֆոռալ՝ անգործ թափառել, ռնդել՝ ախորժակով ազահորեն ուտել, հաբյուրից հաբյուր՝ անպայման, առանց կասկածի, հաբյուր մեկ տարի ինձ պետք է՝ ինձ ամենևին պետք չէ, ինձ չի հետաքրքրում, կյանքում չես տեսնի՝ երբեք չես տեսնի, ըիբի լինել՝ գլխի ընկնել, կայֆ անել՝ ուրախ ժամանակ անցկացնել, ծածֆ՝ քեֆ, խնջույք, հավաքույթ և այլն: Տարածվել է արտահայտության նաև այսպիսի մի ձև, որ օգտագործվում է բաղձմաստին սաստկություն հաղորդելու նպատակով, ինչպես՝ խում (կամ հո) չխփե՛ց, այսինքն՝ շատ ուժեղ խփեց և այլն: Վերջին ժամանակներս բավականաչափ տարածում է գտել ժարգոնային հաջող բառը, որպես հրաժեշտի բարեմաղթանք:

Երիտասարդության մեջ (և ոչ միայն երիտասարդության) հատկապես փոխաբերական խմաստ են ստանում մի շարք բառեր, ինչպես՝ ճղել՝ փախչել, ցանել (մեկին)՝ ազատվել մեկից, հասցնել, շփակացնել, քիսկացնել՝ խփել, ապտակել, ծախել (մեկին)՝ մատնել, դավաճանել և այլն:

Դարձյալ մի գիտողություն մեր երիտասարդության (նաև՝ դպրոցականների) լեզվում դրսևորվող ակնառու մի երևույթի մասին:

Մեր կարծիքով, երիտասարդները, ընդհանուր առմամբ, հակում են ցուցաբերում հնարավորին չափ սղումներով արտասանելու բառը և մեծ պատրաստակամությամբ կարծես «որսում» են համաժողովրդական լեզվում եղած այդ կարգի ձևերը ու դարձնում իրենց սեփականությունը, ինչպես, օրինակ՝ երսուն, քառսուն, հավքել, վազ[ը]ցնել, շշմ[ը]ցնել, խմց[ը]նել, խոսց[ը]նել (նաև՝ խոս[ը]ցնել), զզվ[ը]ցնել, հաջողց[ը]նել, ուռց[ը]նել (նաև՝ ուռ[ը]ցնել), լսիմ (լսեցի), լսի՞ր (լսեցի՞ր), գրի՞ր (գրեցի՞ր), խոսի՞ր (խոսեցի՞ր), ըտենց, ըսքան, ըտքան, ըստից, ըտից, ընդից, որդից, լավ ըսիր (ասացիր) և այլն: Իհարկե, սա չի վերաբերում բոլորին, բայց քիչ չեն այնպիսի երիտասարդները և դպրոցականները, որոնք փեն ընտանիքում այդպիսի լեզու չեն լսում, իրար հետ խոսելիս հաճախ օգտագործում են այդ կարգի ձևեր:

Դպրոցականների լեզվում ժարգոնային են բառահատումները, որոնք վերաբերում են առարկաների անվանումներին, ինչպես՝ թվաբ (թվաբանություն), աշխարհ (աշխարհագրություն), պատմ (պատմություն) և այլն: Դպրոցականների մեջ տարածված է նաև թխել (արտագրել ուրիշի աշխատանքից) բառը (հմմտ. Թվաբը թխեցի Սուրիկից):

Որպես ժարգոնային բառեր երիտասարդների լեզվում հաճախ հանդես են գալիս նաև օտարաբանությունները:

Խոսակցական լեզվից մի շարք հասարակաբանական կամ ժարգոնային արտահայտություններ թափանցում են գեղարվեստական դրականության մեջ՝ հատկապես երկխոսությունների ժամանակ խոսքին համապատասխան երանգավորում տալու նպատակով²⁰:

Գեղարվեստական ստեղծագործություններում ոճը երանգավորելու նպատակով երբեմն օգտագործվում են նաև խոսակցական

20 Այս տեսակետից շատ բնորոշ են Հ. Մաթևոսյանի ստեղծագործությունները, որոնց լեզուն հնչում է այժմեական և կենդանի, նրա ստեղծագործություններում որոշ զնայքերում տեղ են գտնում ներկայիս խոսակցական լեզվին բնորոշ մի շարք արտասանություններ: Օրինակ՝ Դե ցտեսություն, մեկ-մեկ անցիր. կանչեցին կենտրոն հույ տալու. Թերթի մեջ լավ եմաշել են. ժողովում, զգել են. Իսկ իմ աշխատավարձի վրա ազդում է՝. Մենք էլ չենք անցել. ես՝ ենթադրություն և այլն:

Հ. Մաթևոսյանի դործերում տեղ գտած այս կարգի արտահայտությունները, որոնք վերցված են կենդանի խոսակցական լեզվից, մեր կարծիքով, ամենին չեն գոհացնում նրա ստեղծագործությունների լեզուն, այլ ընդհակառակը, դրան տալիս են մի որոշյալ հւայք ու կենդանություն:

լեզվում դրսևորվող շեղումները գրական նորմայից: Հիշենք Ն. Զարյանի «Աղբյուրի մոտ» կատակերգության հերոսներից մեկի՝ ծուլ և աղխատանքից փախչող կուտնտեսական Բալաբեկի լեզուն, որը շրջանի փոխարեն արտասանում էր [ս]րջան, Սերոժի փոխարեն՝ [Շ]երոժ և այլն:

Եթե գրավոր լեզուն հիմնվում է լեզվական ավանդության վրա և իր բնութիւնով, որպես գրի առնված լեզու, ավելի սրահպանողական է, ապա խոսակցականը ավելի շարժուն է, և լեզվում առաջացած փոփոխությունները այստեղից է, որ թափանցում են գրավոր լեզվի մեջ:

Առհասարակ խոսակցական լեզվում օգտագործվող բառերը իրենց բնութիւնով շատ բազմազան են: Այստեղ բացի հասարակաբանություններից և ժարգոնային բառերից, հաճախակի հանդիպում են նաև բարբառային և օտար բառեր: Բարբառաբանությունները ավելի շատ հատուկ են մեծահասակներին, օտարաբանությունները՝ երիտասարդությանը: Այսպես, օրինակ, անկաշկանդ մտերմական զրույցի ժամանակ հաճախակի, մանավանդ երիտասարդներից, կարելի է լսել այս կարգի բառեր՝ վափշե (вообще), վոփշեմ (вообщем), սերյոզնի* (серьезно), լյուբոյ (любо), ուզլ (угол), պերերիվ (перерыв), օգտագործվում է նաև ընգմիջման ժամանակ արվող նախաճաշի իմաստով: Գնանք պերիսիվ անենք, պերիսիվի փող և այլն), վսյո (все), ստոպ (стоп), ճիուժե*լի (неужели), զաաո (зато) (բաղարկությամբ օգտագործվում է նաև զաթի-ի փոխարեն), մերսի, դաժե (даже), ինչպես և այսպիսի արտահայտություններ՝ մաշինա զանիտ անել, զաստավիտ անել, յազվիտ (կամ յազվություն) անել և այլն: Ոչ հազվադեպ խոսակցական լեզվում հանդիպում են նաև բարբառային օտարաբանություններ, ինչպես՝ մանեթ, ճայաթ, բազաթ, դասաթ, ֆալամ, խիյաթ և այլն:

Խոսակցական լեզվում հանդես եկող մի շարք երևույթներ գրական լեզվի խոսակցական ձևին բնորոշ զուգաձևություններ են և չպետք է համարվեն շեղում գրական նորմայից, առ՝ գրական նորմայի սահմաններում հանդես եկող խոսակցականին հատուկ՝ թույլատրելի տարբերակներ: Եթե մեկը մի՛ խոսեցնիր, մի՛ բարկացնիր ձևերի փոխարեն գործածում է դրանց մի՛ խոսեցու, մի՛ բարկացու տարբերակը, ապա դրանով նա չի խախտում գրական լեզվի նորման, առ՝ գործածում է գրական լեզվի խոսակցականին հատուկ ձևեր: Խոսակցական լեզվում հանդես եկող շատ իրողու-

թյուններ, անշուշտ, պետք է դիտել շեղում դրական նորմայից՝ հասարակաբանություն, օտարաբանություն, բարբառաբանություն, ժարգոն և այլն: Բայց խոսակցականին հատուկ մի շարք երևույթներ բնութագրում են հենց ա՛յդ գոյաձևը: Այս երևույթները քարացած, ավելի շուտ մեկոսացած չեն, նրանք անընդհատ գտնվում են փոխներդրոթության պրոցեսում: Որոշ բարբառաբանություններ ընդհանրանալով վերածվում են հասարակաբանության, հասարակաբանությունը խոսակցական-մտերմական ոճի միջոցով թափանցում է խոսակցական-դրական ոճի մեջ. այստեղից էլ գրականություն:

Դիտվում է երկկողմանի պրոցես. մի կողմից խոսակցական լեզվի կենդանի ոճերը և լեզվական առանձին իրակոմպլուններն են լրահանցում գրավոր լեզվի մեջ, մյուս կողմից խոսակցականը, գտնվելով գրական լեզվի անմիջական ազդեցության տակ, գրավոր լեզվի հետևողությամբ՝ ձգտում է ազատագրվել բարբառային, զրուհկաբանական և օտարաբան զանազան երևույթներից ու արտահայտություններից:

Ակնհայտ է այն փաստը, որ հայոց լեզվի զարգացման ներկա փուլում սահմանները բարբառի և առօրյա խոսակցական լեզվի միջև գնալով ավելի ու ավելի անտրոշ են դառնում, քսոնի որ բարբառները աստիճանաբար լուծվում են խոսակցական լեզվի մեջ: Միայն անգրագիտ գյուղական մեծահասակ բնակչության մեջ կարելի է գտնել «մարուր» բարբառախոսների, որոնց թիվը բնականաբար դնալով նվազում է:

Խոսակցական լեզվում անմիջապես սահմանազատվում են զուտ բարբառային երևույթները, ինչպես, օրինակ՝ ասիլ չես, գրիլ չես, գրիլ մի, գալում եմ, տալում եմ, կյամ ա, կյամ չի, ծաղգած աղղեր, մուրաբա տես ուտի՞լ, կամ՝ ուզըմ եմ մի վառգ էթամ էրեխուս տենամ և այլն:

Պետք է նշել նաև, որ մեր գրական լեզվի խոսակցական ձևը աստիճանաբար կազմավորվելով, դեռևս չի կայունացել, դեռևս որոշակիորեն չի պարզել իր սահմանները և առանձնահատուկ գծերը:

Խոսակցական լեզվի համար բնորոշ է այն, որ նա չի պարունակում այնպիսի գծեր, որոնք առանձնահատուկ են գրքային լեզվին, և մյուս կողմից, չի հանդուրժում զուտ բարբառային երևույթներ:

Գրական լեզվի գրավոր և խոսակցական գոյաձևերը, ինչպես ցույց է տալիս լեզվագրի պատմությունը, չեն կարող լիովին նման լինել: Տարբեր լեզուներում այդ տարբերության աստիճանը տար-

քել: է: Օրինակ, ռուսերենում գրական գրավոր և խոսակցական ձև-վերի միջև շատ մեծ տարբերություններ չկան, մինչդեռ հայերենում դա զգալի է, և այդ հանգամանքը մեծ չափով ազդում է մեր բանա-վոր խոսքի կուլտուրայի վրա: Դա է պատճառը, որ շատ դեպքերում գրական լեզվին լիովին տիրապետող անձինք նույնիսկ դժվարանում են հանապաօրինակ հրապարակություն ասել մի քանի խոսք²¹:

Իրողություն է, որ մեր գրավոր լեզվի և խոսակցականի միջև զգալի անջրպեստ կա: Միատեսակ խրոջություն է, որ այդ տարբե-րությունները գնալով նվազում են: Սակայն էականը, այնուամե-նայնիվ, այն է, որ մեր լեզուն ներկայումս գտնվում է գրավոր (գրքային) լեզվի և առօրյա խոսակցական լեզվի հակասությունե-րի բարդ պրոցեսում:

Բացի լեզվում դիտվող նշված տարբերակումներից, անխուսա-փելի են նաև լեզվական տեղային, տարրաբային և մասնագիտական տարբերակումները, քրոնք խաչավորվում են լեզվի գործառական տարբերակումների հետ²²: Բայց այդ հարցերի մասին խոսելը դուրս է մեր նպատակից, թեև երկատասարդների և դպրոցականների լեզ-վական որոշ հակումներին մենք թեթևաթիվ անդրադարձանք:

Խոսակցականից գեղարվեստական գրականության մեջ են թա-փանցում մի շարք ձևեր, որոնց գրական լեզվին պատկանելը հա-ճախ վեճերի առարկա է դառնում: Համեմատիւ, օրինակ՝ Մնա աս-պիրանտուրա. Տուն սարքենք, ապրենք Կիրովական. Արմենն այդ ամառ արձակուրդի չեկավ. Այդ տարի ինձանից մի ականարկ տպա-գրվեց թերթում. էքսկուրսիային թեթև ժպիտով պարեց քղական քոչարի և այլն (օրինակները գեղարվեստական գրականությունից են): Դժբախտաբար, ժամանակակից գեղարվեստական գրականու-թյան լեզվի և ոճի հարցերը մեր լեզվաբանների կողմից քիչ ուշա-դրությամբ են արժանանում: Օրինակ, մեր որոշ լեզվաբանների հա-մոզմամբ մի՛ հարցրու, մի՛ բարձրացի, գրե՛ք, նստե՛ք և այս կարգի այլ ձևեր գրական մակարդակում չեն գտնվում: Մենք կարծում ենք,

21 Տրոլեյբուտով մենք գրի առանք հետևյալը: Մի 12 տարեկան դպրոցական իր ընկերոջ հետ խոսելիս ասաց. «Հա, մամա ինձ համար թոմս առել ա», իսկ երբ տոմսավաճառը նրան դիմեց տոմս վերցնելու՝ նա պատասխանեց. «Այո, մայրիկս ինձ համար թոմս վերցրել է»: Ինչպես տեսնում ենք, նույն արտահայտության մեջ դպրոցականը չորս բառ փոխեց:

22 Որոշ լեզուների համար նշում են նաև այնպիսի տարբերություններ, որոնք հանդես են գալիս տղամարդկանց և կանանց խոսքում: Այդպիսի որոշ տարբերու-թյուններ թերևս կարելի կլինի ցույց տալ նաև հայերենում:

որ այս կարգի ձևերը գրական լեզվի նորմայից դուրս չեն, այն տարբերությամբ, որ դրանք որպես համայնիշներ թնուֆագրում են գրական լեզվի խոսակցական ձևը, իսկ խոսակցականը, հասկանալի է, գրավոր գրական լեզվի համեմատությամբ ավելի ցածր աստիճանի վրա է գտնվում: Այդ կարգի ձևերը ընտիր չեն, բայց կիրառելի են խոսակցական լեզվում: Բնական է, որ խոսակցական լեզուն կարող է արտացոլվել միմիայն գեղարվեստական գրականության մեջ: Գիտական, հրապարակախոսական, դրասենյակային-պաշտոնական և գրական լեզվի այլ ոճերում խոսակցական լեզվի տարրերի օգտագործումը անթույլատրելի է:

Որպեսզի բացահայտվեն և ցույց տրվեն նորմայից կատարվող շեղումները, դրա համար նախ և առաջ պետք է նորմավորված լինի լեզուն:

Որքան լեզուն հարուստ է, այնքան դժվարանում է նրա նորմավորումը: Բոլոր զարգացած լեզուներն էլ աչքի են ընկնում բառապաշարի և լեզվական միջոցների հարստությամբ, բայց այդ հարստությունը չի խանգարում (թեև դժվարացնում է), որպեսզի լեզուն նորմավորվի: Իսկ լեզվի նորմավորման ժամանակ առաջ են զալիս լեզվի տարբերակվածության բազմ հարցերը:

Ինչպես հայերենում, այնպես էլ այլ լեզուներում գոյություն ունեցող այն տարբերակումները, որոնք արդյունք են լեզվի զարգացման պատմական ուղու, հնարավոր չէ վերացնել կամ համահարթել, լեզուն դարձնելով միատարր կամ նույնական բոլոր ոճերի և բոլոր ոլորտների համար: Սակայն լեզվում տեղի ունեցող պրոցեսների հանդամանակից ուսումնասիրության և զարգացման օրինաչափությունների բացահայտման ու գնահատության անապարհով կարող են ստեղծվել հնարավորություններ և միջոցներ՝ նվազեցնելու լեզվի տարբերակվածության չափերը և մոտեցնելու սահմանները լեզվի գրավոր և խոսակցական ձևերի միջև:

Նշենք նաև, որ խոսակցական լեզվում դրսևորվող լեզվական իրողությունների անհատական և արժեքավորումը մեծ կարելիություն է ստանում լեզվական քաղաքականության ու ոճաբանության, ինչպես և առհասարակ խոսքի կուլտուրայի տեսանկյունից:

Ժամանակակից հայոց լեզվի տարատեսակների հանգամանակից, խորր ուսումնասիրությունը և դրանց ճիշտ գնահատումը հայ լեզվաբանության առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է համարել: